ՎԱՀԱՆ ԴՈՒՅՈՒՄՋՅԱՆ

ԱԶԳԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Ազգագիտակցության օբյեկտիվ-պատմամշակութային բովանդակությունը անցնում է հոգեբանական փոփոխությունների բարդ ճանապարհ, մինչև որ դառնում է անհատի ներաշխարհի սուբյեկտիվ, ներքնայնացված հատկությունը: Պատանեկան տարիքում օբյեկտիվ պատմականի սուբյեկտիվացման այս ընթացքով են պայմանավորված ազգագիտակցության դրսևորումների մի շարք առանձնահատկություններ, որոնց բացահայտումը պետք է դիտել որպես հոգեբանական հետազոտության կարևոր խնդիր, քանի որ այն հնարավորություն է տալիս պարզելու, թե ազգայինը որպես սոցիալ-պատմական և մշակութային երևույթ ինչպես է արտացոլվում կոնկրետ անհատի հոգեկանում, ինչ բնորոշ գծերով է կրկնվում և պատճառականացնում անձի ազգագիտակցության դրսևորումներն ու ամբողջ վարքագիծը:

Մեր կողմից կատարված հետազոտությունների ընթացքում ազգագիտակցության իմաստի սուբյեկտիվացման առավել հաճախ հանդիպող ձևակերպումը «ազգայինն իմն է» պնդումն է: Ընդ որում, «ազգայինն իմն է» հասկացության տակ ըմբռնվում է ոչ այնքան այն, որ «ազգայինն իմն է, ինձ համար է», այլ այն, որ «ես»-ը պատկանում է ազգին:

Հայրենասիրական-գեղարվեստական ստեղծագործություններում սովորաբար զար-գացվում է այն միտքը, որ ազգայինն ավելի բարձր է, ավելի կարևոր է, հավերժ է և որ անհատի գոյությունը պայմանավորված է ազգի և ազգայինի գոյությամբ:

Սակայն, նման հարցադրումը բարոյական է, քան թե հոգեբանական: *Հոգեբանական տեսանկյունից կարևոր է բացահայտել ազգագիտակցության արժեքավորման ներքին պատճառականությունը:* Խնդիրն այն է, որ

բացատրվեն այն օբյեկտիվ հոգեբանական մեխանիզմները, որոնց շնորհիվ ազգագիտակցության սոցիալ–պատմական, մշակութային բովանդակությունը անխզելիորեն միահյուսվում է անձի սեփական կյանքի երևույթներին, երբ անձը, լինելով սոցիալ–հոգեբանականի կրող, հանդես է գալիս միայն իրեն հատուկ անկրկնելի գծերի ամբողջության մեջ: Անձի ինքնագիտակցությունը կապվում է ազգայինի հետ, քանի որ ազգայինը նրա համար առաջին և կարևոր սոցիալական միջավայրն է և որպես այդպիսին, նրա առաջին սուբյեկտիվ պատկերացումների աղբյուրը: Այստեղ առկա է հոգեբանական իդենտիֆիկացման (նույնականացում)՝ մարդուն ու կենդանիներին հատուկ երևույթը, որը հսկայական նշանակություն է ձեռք բերում մարդու հետագա կյանքում, արտաքին աշխարհի սուբյեկտիվ պատկերի ձևավորման համար: *Սակայն «սուբյեկտիվ պատկեր» հասկացությունն արդեն նշանակում է ակտիվություն:*

Յուրաքանչյուր առանձին անհատ դառնում է գիտակցության սուբյեկտ միայն այն դեպքում, երբ յուրացնում է ընդհանրացված հասարակական փորձը, ազգային լեզուն, գաղափարախոսությունը, առօրյա կենսափորձն ու գիտակցությունը:

Անձի զարգացմանը համընթաց տեղի է ունենում նրա ունեցած փորձի միացումը նոր կազմավորվող և ընկալվող հասարակական փորձի հետ: Այսինքն ըմբռնման ակտիվ հոգեբանական գործընթացի արդյունքում ծագում են ազգագիտակցության նոր տարրեր, նոր գիտելիքներ, ընդհանրացումներ, իդեալներ, համոզմունքներ, այդ պատճառով էլ անձի ազգագիտակցությունը կարող է բարձրանալ հասարակական–պատմական փոր-ձի, առկա մակարդակից և իր սուբյեկտիվ նկարագրով գերազանցել վերջինիս:

Կարևոր է այն հարցը, թե ազգագիտակցության դրսևորումները մի՞շտ են որպես այդպիսին գիտակցված սուբյեկտի կողմից, նրա համար ազգային–պատմական ինֆորմացիան լիովին բացահայտված է, թե կրում է խորապես ինտիմ բնույթ:

Այսպես, օրինակ, հաճախ կարելի է նկատել, որ ազգային գաղափարը, ազգային արժեքը ոչ իր աղբյուրով, ոչ էլ իր նշանակությամբ չի ըմբռնվում անձի կողմից որպես այդպիսին: Արդյո՞ք այդ դեպքերում սուբյեկտի գիտակցությունը հրաժարվում է ազգայինից: Այս հարցի պատասխանը կարելի է տալ՝

ուսումնասիրելով ավանդույթների հոգեբանական ազդեցության հարցը: Հարյուր-հազարավոր մարդիկ սովորույթի ուժով պահպանում են ազգային ավանդույթները, պայքարում դրանցից ամեն մի շեղման դեմ, սակայն ոչ այնքան հանուն ազգային արժեքների պահպանման, այլ հանգամանքների բերումով, իրադրության թելադրանքով, կամ, պարզապես, ավանդության ուժով: Օրինակ՝ ամուսնության ժամանակ հայերի համար չափազանց կարևոր է կուսության ինստիտուտը: Շատ պատանիներ ու աղջիկներ դա ոչ թե ազգային արժեք են համարում, այլ մարդու երջանկությանն ու ազատություններին խանգարող հետամնաց սովորույթ, սակայն վախենում են ծաղր ու ծանակի ենթարկվել դրա մասին խոսելու դեպքում: Պատանիներից շատերը որևէ հիմնավոր բացատրություն չեն կարողանում տալ: Միայն քչերն են այն համարում ազգային ընտանիքի հիմք, բացատրում բարոյական անաղարտության, վեհ սիրո և այլ մոտիվներով:

Խոսքը այստեղ վերաբերում է արտաքին պատճառների և ներքին պայմանների դիալեկտիկական փոխազդեցությանը ազգագիտակցության ոլորտում, քանի որ «Արտաքին պատճառները դրսևորվում են ներքին պայմանների միջոցով»[1]: Այդ պատճառով էլ նույն մարդուց, նույն հարցի՝ տվյալ դեպքում ազգային որևէ արժեքի նկատմամբ, միշտ միևնույն վերաբերմունքը պահանջելն անիմաստ է: Ազգագիտակցության դրսևորումները կապված են մարդու շահերի հետ:

Հոգեբանության մեջ վաղուց նկատված է մարդկային գիտակցության սուբյեկտիվությունը, կողմնապահությունը[2], որը ընկալման գործընթացում դրսևորվում է, երբ ինֆորմացիայի խայտաբղետ հեղեղից մարդն ուշադրություն է դարձնում հատկապես այն երևույթներին, որոնք կարևոր է համարում իր գործունեության առաջնային նպատակների և շահերի համար: Ճշմարտության սերը հատուկ է մարդուն, սակայն ավելի հատուկ է ճշմարտության մեկնաբանությունը իր շահերի և հետաքրքրությունների տեսանկյունից:

---

[1] Рубинштейн С. Л. Бытие и сознание.- М: изд-во АН СССР, 1957.- с. 226.
[2] Леонтев А. Н. Деятельность. Сознание. Личность. - М.: изд. 2-е - политиздат, 1976, - с. 124

Ճշմարտության, անկեղծ ձգտման և շահադիտության հարաբերությունը հիանալի կերպով է բնութագրում Գ.Ռ.Լայբնիցը՝ հետևյալ բնորոշմամբ. «...եթե երկրաչափությունն այնպես հակասեր մեր ձգտումներին, կրքերին և մեր շահերին, ինչպես բարոյա-կանությունը, այդ դեպքում մենք նույն կերպ կվիճեինք ընդդեմ նրա և կխախտեինք այն, հակառակ Էվկլիդեսի և Արքիմեդի բոլոր ապացույցների»[3]: Նշանակում է՝ ազգագի-տակցության հարցում ոչ թե ճշմարտություն, այլ շահագրգռվածություն պետք է որոնել:

Օրինակ. «Մի խումբ պատանիներ բանավիճում են ազգային մի սուր խնդրի վերաբերյալ, պատանիներից մեկի բերած միտքը հակասում է խմբի դիրքորոշմանը: (Խոսքը վերաբերում է Պ.Զեյթունցյանի «Արշակ 2-րդ» վեպի դրական հերոսներից մեկի՝ Գնելի ասույթին): Վերջապես որոշում են բացել գիրքը և նայել: Գիրքը բացում են և կարդում: Ընդդիմախոսը նախադասությունը տառացիորեն ճիշտ է բերել, համապատասխան գրվածին: Պատանիների խումբը սակայն չի ընդունում, իսկ նրանցից մեկն ասում է. «Այստեղ ուրիշ բան գրված կլինի»: Դրանով նա պարզունակ կերպով արտահայտում է ազգայինը հերոսականի լուսապսակից չզրկելու իր շահագրգռվա-ծությունը, ցանկությունը, որն, անկասկած, ազգագիտակցության դրսևորում է:

Հոգեբանական տեսանկյունից առավել բարդ է ազգագիտակցության անձնային իմաստի հարցը, կապված *նշանակության* հիմնահարցի հետ: Քանի որ նշանակությունը մարդկային գիտակցությունը ձևավորող կարևոր տարր է:

Գիտելիքը, տեղեկությունը պետք է նշանակություն ձեռք բերեն, որպեսզի վերածվեն գիտակցության երևույթի: Լ.Բոժովիչը, վկայակոչելով ամերիկյան հոգեբան Կարլ Ռոջերսի ուսմունքը, նշում է, որ «Անհատի փորձը միշտ չէ, որ գիտակցված է նրա կողմից, փորձի իմաստավորումը ընթանում է սիմվոլներով, և ամենից առաջ խոսքային սիմվոլներով նշանակելու ուղիով»[4]: Կ.Ռոջերսը անձնավորության ներքին կառուցվածքում առաջատար տեղ է հատկացնում անձնավորության գիտակցությանն ու ինքնահաստատմանը: Նույնիսկ կույր, խուլ ու համր երեխաների մոտ լեզվի և մարդուն հատուկ առարկայական

---

[3] Лейбниц Г. В. Новые опыты о человеческом разуме. – М.-Л., 1936. - с. 88.
[4] Божович Л. И. личность и ее фармирование в детском возрасте. – изд-во «Просвещение», - М.: 1968, - с. 93

գործունեության հետևանքով, որը տեղի է ունենում միայն հատուկ դաստիարակության դեպքում, ձևավորվում է նորմալ գիտակցություն, այնինչ, երբ ինչ–ինչ պատճառներով տեղի չի ունենում գործունեության «մարդկայնացում» (հումանիզացիա) կամ հաղորդակցում, չնայած սենսամոտորային ոլորտի լրիվ պահպանվածությանը, գիտակցություն չի առաջանում:

«...Նշանակության կրողը հանդիսանում է լեզուն,- գրում է Ա.Լեոնտևը,- սակայն լեզուն իմաստի ստեղծողը չէ, կարևորն այն գործունեությունն է, որի շնորհիվ մարդիկ ճանաչում և փոփոխում են օբյեկտիվ իրականությունը»[5]:

Գիտակցության տրամաբանական կողմը, որքան էլ այն զարգացած և ծավալված լինի, դեռևս չի խոսում անձի համար վերջինիս նշանակության մասին: Դրա ցայտուն օրինակը *գնահատականի* նշանակության հարցն է մարդու համար: Միևնույն գնահատականը տարբեր անձերից յուրաքանչյուրի համար կարող է հանդես գալ բոլորովին տարբեր նշանակություններով:

Օրինակ. «Դու հերոս ես» գնահատականը մի դեպքում առաջացնում է հպարտություն և դրդում հայրենասիրական նոր գործունեության, մեկ այլ դեպքում՝ ինքնագոհություն և ամբարտավանություն, երրորդ դեպքում՝ դժգոհություն, զոհի հոգեբանություն և այլն, նայած հանգամանքների և իրադրությունների զուգորդմանը: Սա էլ հոգեբանության առաջ խնդիր է դնում տարբերակել «գիտակցվող օբյեկտի նշանակությունը» և «նրա նշանակությունը սուբյեկտի համար»[6]:

Ազգագիտակցության ոլորտում այս երկակի նշանակությունը հստակ կերպով երևում է հետևյալ օրինակներից.

Ֆրանսիացի հայագետը, որ հիանալի գիտի Մեծ եղեռնի պատմությունը, ծանոթ է հայոց պատմության ելևէջներին, գիտականորեն վերլուծում է պատմական անցյալը, ցույց է տալիս պատճառները և այլն, և այլն, ոչ թե ազգային, այլ համամարդկային ցավն ու բողոքն է արտահայտում մարդկության դեմ կատարված ոճիրի համար: Նա այս ամենը տեսնում և ըմբռնում է մարդկայնության, ընդհանուր մարդկային քաղաքակրթության տեսանկյունից: Իսկ շարքային,

---

[5] Леонтев А. Н. Деятельность. Сознание. Личность. - М.: изд. 2-е - политиздат, 1976, - с. 140.
[6] Նույն տեղում:

թեկուզ բոլորովին չկրթված հայի համար ամեն մի դրվագ կապվում է իր անձի, իր բախտի, իր ապագայի հարցերի հետ և ոչ միայն ըմբռնվում է սեփական շահերի և երջանկության տեսանկյունից, այլև իր արմատների, իր տեսակի շարունակման համար ունեցած նշանակության տեսանկյունից: Մշակութաբանական որոշ տեսություններում ներմուծվում է *«բազային անձնավորություն»* կամ *«արխետիպի»* հասկացությունը, որպես արտաքին պայմաններին անհատի հարմարման գործընթացում «ռասսայական, էթնիկական, ազգային գծերի» գերակշռության դրույթը, որից ուղղակի բխում է «նշանակության հոգեբանական հոլովույթի»[7] անմիջական սերտ կապը անձնավորության ազգագիտակցության դրսևորման հիմնահարցի հետ:

Ելնելով գրականության մեջ բերված օրինակներից՝ կարելի է պարզ տեսնել, որ ազգագիտակցության դրսևորման հոգեբանական գործոնները անձնավորության կառուցվածքում սերտորեն միահյուսված են տեսակի պահպանման կենսունակ և ուժեղ բնազդի, անձնավորության հոգեկանի, ֆիզիոլոգիական մեխանիզմների հետ: «Ձարդերու ժամանակ ենթական կը վախնայ ու կը շուարի... երբեմն ալ՝ աներևակայելի արագություն մը, ճարպկություն մը, հերոսություն մը կ՝ ունենայ, խելքը կը բացուի, երևակայությունը կբորբոքի ու կը սաստկանայ, սիրտը արտասովոր քաջութիւնով մը կը լեցուի, մարդը առիւծ կը դառնայ, կ՝ ընդդիմանայ և կամ թշնամիին վրայ կը խոյանայ, կը կոտորէ ու կը ջարդե»[8]:

Քննարկվող ֆենոմենը ազգին, ցեղին սպառնացող վտանգի դեպքում անձնավորության հոգեբանական պլանում ակտիվանում է և խոր նիրհից արթնացնում է անբիծ, հստակ, մաքուր, ակտիվ ազգագիտակցության դրսևորումներ: Դրա վառ ապացույցն է օտարության մեջ ապրած և մեծ հռչակ, փառք ու հարստություն ձեռք բերած հայ հայտնի մարդկանց բուռն դրական վերաբերմունքն ազգայինի նկատմամբ (Հովհ. Այվազովսկի, Կոմիտաս, Գ.Գյուլպենկյանց, Շ. Ազնավուր, Ան. Վերնոյ, Քըրք Քըրքորյան և այլն): Նրանց համար, ըստ հանգամանքների դասավորության, ազգագիտակցությունը

---

[7] Леонтев А. Н. Деятельность. Сознание. Личность. - М.: изд. 2-е - политиздат, 1976, - с. 145.

[8] Պողոսյան Յ.Պ., Ներածություն հայ հոգեբանության. - Կահիրե, 1965. – էջ 128-129:

կարծես թե պետք է ընթանար մարման ուղղությամբ: Օտար միջավայր, հաջողություն, փառք, ազդեցություն, որոնք շատ կարևոր են անձնական պլանում: Մարդը հասել է իդեալական վիճակի, բայց իր ազգին մոտենալու, իր ազգն իմանալու, իր ազգի գոյությանը ծառայելու, ճգնաժամային պահերին հայրենիքին օգտակար լինելու ցանկությունն ավելի վառ է դրսևորում: Ուշադրություն դարձնենք ևս մեկ հանգամանքի. հասուն տարիքում, հայրենիքի ծանր կյանքից փախչող կամ օտար ափերում «դրախտ» փնտրող մարդկանց օտարացման սկզբնական վիճակին հատուկ է վերաբերմունքի առնվազն ուժեղ արտահայտված բացասական ֆոնը. «էս ի՞նչ երկիր է», «Միայն այստեղից փախչելը կփրկի», «Մարդ մի անգամ ծնվի, էն էլ Հայաստանո՞ւմ» և նման այլ բողոքներ: Այս բողոքները բնորոշ են հայրենիքից հեռացող մարդկանց, և դրանց մեջ հոգեբանական առումով առկա է մեղավորության զգացումն ու արդարացման փորձը: 10-ից 9-ի դեպքում, և եթե ոչ ավելի հաճախ, հայրենիքից դուրս գտնվող, հայրենիքից «փախած» մարդկանց մոտ, որպես հիվանդություն, գլուխ է բարձրացնում *կարոտախտը*: Դրախտային երկրում, հաջողությունների մեջ, մարդը հասել է իր նպատակին, բայց ասում է, որ հայրենիքում դառը կյանքն ավելի թանկ է, քան օտար երկրի դրախտը:

Հոգեբանական տեսակետից, մեր կարծիքով, օտարության մեջ ազգային գիտակցությունը բորբոքվում է թեկուզև հենց այն պատճառով, որ մարդը, օտար երկրում բախվելով օտար քաղաքակրթության դրսևորումներին, նախ մերժվում է դրանց կողմից, հետո համոզվում, որ իրենը, ազգայինը ավելի լավն է, քան իր ներկա ապաստանը: Այսպիսի ոչ սովորական իրադրության մեջ ազգագիտակցությունը ստանում է սուբյեկտիվ իմաստ: Եվս մեկ հավանական նկատառում. *ազգայինը խորն է նստած մարդու մեջ, այդ իսկ պատճառով էլ որոշակի իրադրության մեջ այն դրսևորվում է որպես անսպասելի պաշտպանական մեխանիզմ, որպես դիրքորոշում:*

Այս դրույթը կարող է հիմք ծառայել հասկանալու ազգագիտակցության պահպանողական բնույթը, ժամանակակից պայմաններում բանալի հանդիսանալ տարածաշրջանային էթնիկ բախումները լուծելու համար: Հոգեբանական վերլուծության համար անսահման նյութ է պարունակում արտակարգ վիճակնե-

ռում հայտնված մարդկանց վարքագիծը: Տվյալ դեպքում նկատի ունենք ազգագիտակցության մասսայական դրսևորումները ամբոխի վարքագծում:

Մեր կողմից կատարվել են ուսումնասիրություններ Արցախի ազատամարտին մասնակցած նախկին զինվորականների շրջանում, խոսքը վերաբերում է այդ պայքարին գիտակցորեն, կամավոր զինվորագրվելու մոտիվներին, թեման ինքնին կարևոր է և հետաքրքրական, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել միայն այն իրադրությունը, երբ պատանին կամավոր կերպով զինվորագրվում է, սակայն հիասթափվում է, տեսնելով, որ հրամանատարն ազնիվ չէ, զինվորին չի հարգում, «ընկերներին ծախում է» և այլն:

Նույն պատկերն է առկա ուսանողության միջավայրում, դասախոս–ուսանող հարաբերություններում: *Դասախոսի բարոյազուրկ վարքը ծանր ազդեցություն է ունենում ուսանողի ազգագիտակցության վրա:* Եթե այդ փաստերի կողքին դնենք Եղեռնի և թուրքերի ջարդերից վերցված օրինակներ, կտեսնենք, *որ բացահայտ թշնամու կողմից անձի նկատմամբ կիրառված զրկանքներն ու խոշտանգումներն ուժեղացնում են ազգագի-տակցությունը և յուրաքանչյուր անձի կարող են վերածել «հոգեբանական մի անպար-տելի ամրոցի»*: Այսինքն ազգագիտակցության անձնային իմաստը միշտ էլ մեկնաբանվում է վերջինիս կոնկրետ նշանակությամբ:

Այս իմաստով խոսուն են Հ.Պողոսյանի գրքում նկարագրված բազմաթիվ օրինակները, որոնցից կարելի է գալ այն եզրակացության, որ կողքինի, հարազատի, նույն ազգի ներկայացուցչի հոգեբանական նահանջը, բարոյական աղավաղումը ավելի կործանարար ազդեցություն է թողնում անձի ազգագիտակցության վրա, քան ոխերիմ թշնամու կողմից խոշտանգվելը՝ փոխվում է ազգագիտակցության նշանակությունը, և տառապանքն ավելի տանելի է դառնում, քանի որ անձի կողմից գիտակցվում է որպես իր ազգի, իր արմատների, իր համար ամենաթանկ արժեքների դեմ ուղղված վտանգ[9]: Պատանիների ազգագիտակցության դրսևորումները, որ առաջին հերթին գիտակցվում են անձ-անձ փոխհարաբերությունները, որոնք ունեն հետևյալ հոգեբանական

---

[9] Պողոսյան Հ.Պ., Ներածություն հայ հոգեբանության. - Կահիրե, 1965. – էջ 159:

իմաստը. «Քանի որ ազգայինը «և իմն է, և քոնը», հետևաբար եթե դու ոչնչացնում ես, ապա ես էլ եմ ձեռք քաշում»:

Երկրորդ հոգեբանական իմաստն այն է, որ «ես հայ եմ (ազգության ներկայացուցիչ), դու թուրք ես (այլ ազգի), ինձ ոչնչացնելով դու ոչնչացնում ես իմ տեսակը, ցեղը, որովհետև դա քեզ համար բարիք է, իսկ ինձ համար չարիք: Ուրեմն ես քո դեմ պետք է պայքարեմ, քեզ հաղթեմ կամ կործանեմ: Եթե ես չպայքարեմ, ես կոչնչանամ» և այլն:

Նշենք, որ այս ընդհանրացված արտահայտությունները վերցված են մեր կողմից հարցման ենթարկվածների կոնկրետ պատասխաններից:

Այսպիսով, ազգագիտակցության նշանակության հարցը կարող է մղվել առաջին պլան, աղավաղել կամ հստակեցնել ազգագիտակցության օբյեկտիվ բովանդակությունն ու անձնային իմաստը: Այս դրույթը ելակետ է բացատրելու համար պատանիների վարքագծի ազգագիտակցության հետ կապված մի շարք բարդ իրադրություններ:

Մեր կողմից մարդկանց գիտակցության վրա 1988թ. աղետալի երկրաշարժի հոգեբանական ազդեցության շուրջ կատարված ուսումնասիրությունների արդյունքները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ բարդ, աղետալի իրադրություններում որոշակիորեն դրսևորվում է այն հոգեբանական օրինաչափությունը, որ իրական կյանքի «թվացեալ» անսասան արժեքները հանկարծակի, կարծեք առանց պատճառի, զրկվում են իրենց անձնային նշանակությունից: Ամեն ինչ կորցնում է իր նշանակությունը, առաջանում է հիասթափություն, հակազդեցության մերժողականության գիծ, դառնում է հասարակական, սոցիալ-քաղաքական դժվարին հոգեբանական խնդիր: Մարդիկ զարմանում են, որ չեն կարողանում հասկանալ իրենց հոգեկանում կատարվող փոփոխությունները, հատկապես անտարբերությունը ազգային արժեքների, ընտանիքի, երեխաների, սեփական պատվի և արժանապատվության նկատմամբ: Դժվար չէ ենթադրել, որ այս դեպքում գործ ունենք մարդկան գիտակցության, և դրանով իսկ ազգագիտակցության ձևախեղումների հետ:

Ուսումնասիրելով անձնային նշանակությունների և ազգագիտակցության անձնային իմաստի հոգեբանական հակասական փոխազդեցությունների բարդ ընթացքը, կարելի է նկատել, որ պատանիների ազգագիտակցության դրսևո-

ումների մի շարք առանձնահատկություններ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ունեն անհատական անկրկնելի բնութագիր:

Յուրաքանչյուր անձ այնքան կոնկրետ ապրումներ է ունենում, որ ոչ միայն չի պատկերացնում իր ապրումների ընդհանուր օրինաչափ բնույթը, այլև սոցիալ–պատմական պայմանավորվածությունը, իր ձգտումների և նպատակների ընդհանրությունն ուրիշների նպատակների օբյեկտիվ պայմանների հետ, այլ նույնիսկ կարծում է, որ իր սերը, ատելությունը, ազգի և ազգայինի նկատմամբ իր վերաբերմունքը, հարաբերություններն ունեն միայն հատուկ պատճառներ: Իհարկե, կա նաև ճակատագրին ենթարկվածություն, ուրիշների նման ապրելու երևույթ, սակայն դրա խորքում դարձյալ չի բացառվում զգացմունքների վերոհիշյալ դրսևորումը: Մեր կարծիքով, դա հենց ազգագիտակցության դրսևորման բնական ընթացքն է, որն իրավունք է տալիս խոսելու ազգագիտակցության սուբյեկտիվացման, ներքնայնացման օրինաչափ բնույթի մասին:

Եվս մեկ հանգամանք: Ազգագիտակցությունը և նրա դրսևորումները հաճախ անձնավորության կողմից մեկնաբանվում են բոլորովին այլ տեսանկյունից, սովորաբար կոնկրետ-անձնային տեսանկյունից: «Հանքաքարի վաճառականի համար,- գրում է Կ.Մարքսը,- հանքաքարը չունի հանքաքարի իմաստ»[10], ունի վաճառքի առարկայի իմաստ: Օրինակ, հաճախ կարելի է հանդիպել ազգագիտակցության պաթետիկ դրսևորումների, որոնք սակայն կեղծ դրսևորումներ չեն: Ավելին, դրանցում արտահայտվում է անձի ներաշխարհի բովանդակությունը, իր համար թերևս շատ կարևոր, դրամատիզմով լի, երբեմն ողբերգական կողմը: Ողբերգական թեկուզ այն առումով, որ պարզապես ադեկվատ արտահայտության ձևեր ու եղանակներ չգտնելու, շրջապատի կողմից սխալ ըմբռնվելու պատճառով, անձի՝ ազգին ուղղված լավագույն ձգտումները աղավաղվում են, ձևախեղվում են՝ պատճառ դառնալով ծանր ապրումների: Ի դեպ, հարցն այստեղ միայն ներքին ու արտաքին խոսքի փոխադարձ անցման մասին չէ: Բանն այն է, որ ազգագիտակցության անձնային իմաստները հանրորեն ճանաչված հասկացություններով ձևակերպված,

---

[10] Маркс К., Энгельс Ф. соч., том 6, – с. 432.

պատրաստի վիճակում չեն հայտնվում ինչ–որ «ցուցափեղկերում», որի առջև կանգնած անհատին մնար միայն դրանք ընտրելու և օգտագործելու խնդիրը: Գաղափարների և պատկերների միջոցով ստեղծվում է հակադարձ ակտիվություն, որը թափանցում է անձի գործունեության ոլորտները, «ստեղծելով նրա իրական փոխհարաբերությունների շրջանակը»[11], ընդ որում դժվար է մերժել այն միտքը, ըստ որի գործունեությունը հենց գիտակցության ստեղծումն է, բխեցվելով գիտակցական նպատակից՝ այն հարթում է նպատակի իրականացման ուղին, որի յուրաքանչյուր դրվագում առաջանում են անսպասելի հակասություններ, մտքեր, երևույթներ, նպատակների բախումներ, որի ընթացքում անհատը կանգնում է ընտրության առաջ, և անձնային իմաստ են ստանում նոր նշանակություններ: *Պատանին չի կարողանում հստակ ձևակերպել հայրենասիրության, իր ազգի հարատևության գաղափարները, բայց ազատամարտը նրան ձգում է: Ընտրելով ազատամարտիկի ուղին՝ նա ամեն օր, ամեն պահ կանգնում է վարքի, գործողության ձևի ընտրության անհրաժեշտության առաջ: Ընտրելով իր վարքի ձևը՝ նա իրեն համարում է ճիշտ: Սակայն որոշ ժամանակ անց դրանցից շատերը վերաիմաստավորվում են: Պատճառ են դառնում որոշակի դեպքեր, դիպվածներ, գործողություններ՝ ընկերոջ զոհվելը, իր վիրավորվելը, արձակուրդ վերադառնալը և այլն:* Հետազոտական առումով հետաքրքրություն են ներկայացնում զինվորների նամակների քննարկումները, որոնք ցույց են տալիս, որ շատերի մոտ համոզված ազգագիտակցությունը ոչ թե դրսից է ներշնչված, այլ կենսական փորձի հետևանք է:

Կեղծ ազգասիրության դրսևորումների ժամանակ բանը բոլորովին այլ է. անձնավորութային նշանակություններն անձի համար նոր չեն, դրանք վաղուց հայտնի են, հասարակայնորեն իմաստավորված ու ձևակերպված ադեկվատ ձևերով, որոնցով նա արտահայտում է ոչ թե այն, ինչն, իր կարծիքով, բարձր է գնահատվում, այլ այն, ինչը «լավագույնս» կփոխհատուցվի շրջապատի կողմից: Հետևաբար, անձի ազգագիտակցությունը ճիշտ հասկանալու ճանապարհին կանգնած է մի բարդ հիմնահարց. *ինչպես տարբերել վարպետությունը, ազգագիտակցության ցուցադրումը անձի անկեղծ դիրքորոշումից:*

---

[11] Леонтев А. Н. Деятельность. Сознание. Личность. - М.: изд. 2-е - политиздат, 1976, - с. 155.

Պատանեկության ազգագիտակցության ուսումնասիրության ընթացքում սա *հոգեբանական հետազոտության բարդ խնդիր է: Պատանեկության ռոմանտիզմը, անփորձությունը, արտահայտման պաթետիկությունը ստեղծում են կեղծ պատկեր՝ պատանու ներաշխարհի, ազգային հարցերում նրա անկեղծության, մտադրությունների կայունության, գործողությունների նպատակասլացության վերաբերյալ*: Մյուս կողմից, համապատասխանաբար, բացասական դաստիարակություն ստացած, թույլ կամք, հեռանկարներ ու վեհ պահանջմունքներ չունեցող պատանին թողնում է հենց այն տպավորությունը, որ ինքը մտադրվել է: Երկու դեպքում էլ առաջանում է արհեստականորեն ստեղծված (ոչ թե իրական) պատկեր: Ավելին, պատանիների հետ շփման մեջ մտնելու բարդություններ են առաջանում: Ուսումնասիրությունների խնդիրը դառնում է ազգագիտակցության տարրերի և այդ տարրերը կապող միջոցներ ուսումնասիրելը և ապա նոր, ամբողջական պատկերացում կազմելը: Օրինակ՝ եթե հարցի իմաստն այն է, թե դու հայրենասե՞ր ես, ազգասե՞ր ես, ուզո՞ւմ ես քո ազգի հաջողությունը, կյանքդ կտա՞ս հանուն հայրենիքի, ազգի, սովորաբար ստանում ենք դրական պատասխան: Պետք է նշել, որ նույնիսկ այն դեպքերում, երբ հարցման ենթարկվածի մտադրություններն ու գործողություններն ակնհայտորեն չեն համապատասխանում նրա ասածին, այդ դեպքերում էլ դեռևս պարզ չէ, կե՞ղծ է պատանու ներքին դիրքորոշումը, թե՞ մեր պատկերացումն է կեղծ այդ դիրքորոշման մասին, որովհետև դեպքերի գերակշռող մասում պատանին արտահայտում կամ կարողանում է արտահայտել ոչ թե ապրումների և գիտակցության ներքին ադեկվատ բովանդակությունը, այլ այն, ինչի մասին երազում է, այսինքն այն, ինչ ինքն իրեն կցանկանար տեսնել: Իսկ եթե պատանին երազում է հայրենասիրության, սխրանքների մասին, ուրեմն նա դրսևորում է ազգասիրություն, դրանով իսկ՝ ազգագիտակցություն: